ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը տարվույս 20 փետրվարին հղել է ուղերձներ, գեղագիր հատուկ կոնդակներով՝

1. Նորին Վեհափառություն Հուսեյն Բ թագավորին՝ Հորդանանի,
2. Վսեմաշուք նախագահ Հաֆեզ Ասատին Սիրիայի Հանրապետության,
3. Վսեմաշուք նախագահ Ամին Ճեմայելին Լիբանանի Հանրապետության,
4. Վսեմաշուք նախագահ Սատտամ Հուսեյնին Իրաքի Հանրապետության,

հետևյալ բովանդակությամբ՝

«Գոհություն Աստուծո ամենակալին, որ պատեհությունը ունենք հայ ազգի հավատքի կենտրոն բազմադարյան Ս. Էջմիածնից, օրհնությամբ Մեր այս ուղերձը առաքելու Ձերդ Գերազանցության, իմաստուն և քաջարի նախագահիդ:

Այս պատեհությունը Մեզ ընծայում է ողբերգական հիշատակը Հայ Եկեղեցու և ժողովրդի մոտ երկու միլիոն զավակների նահատակության, որի յոթանասունամյա տարելիցը ոգեկոչելու են աշխարհի բոլոր հայերը, որ ի Սովետական Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, առաջիկա 24 ապրիլին:

Սգո և աղոթքի այս սրբազան պահին, Հայ Եկեղեցին ու ժողովուրդը չեն կարող մոռանալ այն մարդասիրական վերաբերմունքը, որ այնքան մեծահոգությամբ ցուցաբերեցին Ձեր երկիրը և հայապաշտպան արաբ ազնիվ ժողովուրդը բազմահազար թշվառ հայերի նկատմամբ, որոնք վերապրողներն էին Օսմանյան կառավարության կողմից 1915 թվականին կազմակերպված ցեղասպանության, որին զոհ գնաց ամբողջ հայ ազգաբնակչությունը Արևմտյան Հայաստանի: Նահատակված մեր անմեղ զավակներից վերապրողները, մեծ մասամբ որբեր, արաբ ազնիվ ժողովրդի ծոցում գտան՝ ապահով ու խաղաղ ապաստան, եղբայրական հոգատարություն և ամեն ազատություն ապրելու և կազմակերպելու իրենց համայնքային եկեղեցական կյանքը, կրթական ու մշակութային հարակից հիմնարկություններով, մնալով հավատարիմ ու շինարար քաղաքացիները իրենց նոր հայրենիքի:

Ցեղասպանության ճիրաններից ապատված տասնյակ հազար հայ ընտանիքներ, 1915-ից հետո ապաստան գտան նաև Արևելյան Հայաստանում, ուր այսօր ապրում և վարգանում է փրկված հայ ժողովրդի մայր վանգվածը Սովետական Հայկական Հանրապետության հովանու ներքո, խաղաղ ու ապահով:

Հայ Եկեղեցին և համայն հայ ժողովուրդը, սկսած Սովետական Հայաստանից մինչև աշխարհի բոլոր հորիզոնները, ուր մի հայ մարդու սիրտ է բաբախում, այսօր անհուն երախտագիտությամբ հիշում են Ձեր երկիրը և արաբ ավնվահոգի ժողովրդին, ու Մեր միջոցով նրանք բոլորը Ձերդ Գերազանցության են ներկայացնում իրենց խորագգաց շնորհակալությունը և աղոթում, որ բարին Աստված միշտ պահապան ու մարտակից մնա Ձեզ և Ձեր երկրին ու հավետ պահպանի այն խաղաղության, հառաջդիմության և ծաղկման մեջ, իրականացումովը արաբ ազգի բոլոր արդար իդեալների:

Թույլ տվեք, վսեմաշուք Տիար Նախագահ, Մեր այս ուղերձով բերել նաև անձամբ Ձեզ Մեր ջերմագին բարի մաղթանքները Ձեր արևշատության և Ձեր իմաստուն իրագործումների ամրապնդման համար, ավելի ու ավելի ճառագայթումովը Ձեր հեղինակության միջազգային կյանքում:

Օրհնություն և փառք Ձեր մեծ հայրենիքին»:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
22 փետրվար 1985 թ.